

ՀԱՅ ԶԵՂՈՒՄՆԵՐԻ ԳՐԱԳՐՈՒԹԵՐՆ
ՀՐԱՄԱՆԱԿԱԲՐԵՐՆ ԽՈՐԵՐ ՔԱՀ. ՄԱՍՏԱԿԱԿԱՆՑԻ

Ծ. Ա. Վ. Տ. Տ. 96
Հ 669

№ 4

ԵՐԿՐՈ

ՀԵՔԵԾՈՓ



Գիւնէ է 5 կող.

891-995
Հ - 89

Թիվ 1/10
Արագածոտն Հայոց հեծոց Ասմեն. Փ.
1909

ՀՊՄ
2-41122

ՀԱՅ ԶԻՆՈՒԹՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԻՆ ԽՈՐԵՆ ՔԱՅ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑԻ

Զ-41122 NOV 2011

891.99.5
4-89

№ 4

ԳՐԱ

ԵՐԿՈՒ

ՀԵՖԵՍԻՓ

ՀԻՎ. № 22677

ԹԻՖԼԻՍ
Արագատիպ «Նաղեժդա», Անմեն, փ. № 4
1929

ՂԱԶՃԻ ՏՂԱՅ*)

Շատ հին ժամանակ մի որբեայրի կնիկ էր ապրում, որ մի հատիկ մանչ զաւակ ունէր: Տղան շատ խելառ էր և խեղճ կնիկը ինչ փեշակի էլ տուեց, բանի պէտք չեկաւ. ամեն տեղից փախչում էր, ոչ արհեստ էր ուզում սովորել, ոչ էլ բանի կենալ էր ուզում:

Խեղճ կնիկը տարաւ տուեց դերձակի մօտ որ արհեստ սովորի. դերձակը կարծեց թէ կարող է բան շինել, վերցրեց և ցոյց տալով թէ ինչպէս են շորերը ձևում, նրան մահուդի մի կտոր տուեց և հրամայեց ձեել իսկ ինքը տուն գնաց. Մինչև վարպետը խանութ կը գար, տղան խանութում եղած-չեղած բոլոր մահուդները կը տրտեց կարծելով թէ բան է շինում: Վարպետն եկաւ:

— Տօ, էդ լինչ ես արել —, ասաց վարպետը բարկացած:

— Դու չասացի՞ր թէ ձեեմ, ես էլ ձեեցի: — Գնա կորիր, շան լակոտ —, ասաց ուստին ու դուքս արաւ խանութից: Տղէն տուն եկաւ: Կնիկը զարմացած հարցրեց թէ լինչու է տուն եկել. տղան պատմեց բոլորը: Թշուառ կնիկն էր բան չասեց ու էլ արհեստի չը տուեց:

*) Սուն և միւս հեքիաթը ոուսահայ բարբառի փոխադրուել և հրատարակելու իրաւունքը ստացել եմ պ. Քերովը և Սավոնանից, որը մի շարք հեքիաթներ է ժողովել Խոտորջում և ուղարկել Վիեննա և Մ. Հաճեանին հրատարակելու: Ղազճի նշանակում է սագ վաճառող, չ. չ.



40058-67

Երկուսն էլ քաղցած էին ու տանը հաց չը
կար: Տղան մտածեց մի որևէ բան ծախել, որ
հաց առնի ու ուտեն:

—Մայրիկ, բեր մի բան տուր, տանեմ ծա-
խեմ, այսօր ուտենք, տեսնենք վաղը ի՞նչ կը լինի:

—Հրէն զազը—, ասաց մայրը, —տար ծախիր:

Տղան դադն ասաւ, տարաւ բազարը ծա-
խելու: Նրան ըստ եկաւ թագաւորի վեզիրը, որ
ջուտ էր ու հարցրեց թէ՝ էդ ճնճղուկին ի՞նչ տամ:

—Սա ճնճղուկ է—, պատասխանեց տղան:

—Ճնճղուկ չէ, հապա ի՞նչ է:

Տղան շատ որ զօրեց, մօտը կանգնող մար-
դիկ ասին «տօ, ի՞նչ ես անում, դա թագաւորի
վեզիրն է, խօսքդ քեզ քաշիր, թէ չէ գլուխդ կը
թոցնէ»: Տղան տեսաւ որ հակառակուելով բան
չի դուրս գալ, վերցրեց ու տասը փարայով տուեց
վեզիրին՝ զազը ճնճղուկի տեղ ծախեց, բայց մըտ-
քում ասաց. «Կեցիր, ես քու հախիցը կը գամ»:

Իեղճ տղան շուարած տուն գնաց, ձայն ծրպ-
տուն չը հանեց, բոշայի շորեր հագաւ ու գնաց
վեզիրի տուն ողորմութիւն ուղելու: Այնտեղ նա
լսեց վեզիրի խօսքերը, որ ասում էր իր կնոջը.
«այս զազը լաւ կեփես, ոսկէ ափսէի վրայ կը
դնես, քրման շալով կը ծածկես ու սահաթի եօ-
թին կը դրկես, որ թագաւորի հետ միասին վայ-
ելենք»: Տղան էլ տասը փարայ ողորմութիւն
ստացաւ, ուրախ ուրախ վերցրեց ու դուրս թուաւ:
Հենց որ ժամանակը վրայ հասաւ, տղան

լաւ հագնուած եկաւ ու վեզիրի դրանը կամ դնեց
ու ասաց կնոջը.

—Աղէն հրամայեց թէ՝ եփած դազը տուեք
որ թագաւորին տանեմ:

Վեզիրի կինը կարծելով թէ ճիշտ է ասում,
դազը դրեց սինու վրայ, քրման շալով ծածկեց
ու տուեց տղին, իսկ նա վերցնելով իր տունը
տարաւ, նստեց իր մօրը հետ ու անուշ անուշ
կերան:

Մէկէլ օր գիշերով տղան գնաց թագաւորի
սարայ և պատի վրայ մի թուղթ կպցրեց, որի
վրայ այսպէս էր զրուած: «Ղազճի եմ, զագճի,
տեսակ-տեսակ օյին գիտեմ, պստիկը սա է, մեծը
յետոյ կը տեսնէք. դուք դազը ճնճղուկի տեղ էք
առնում հա»:

Տղան տուն եկաւ և մօրը հարցրեց թէ իր
հայրը հէջ հին ու մին խանութ չի ունեցել: Մայրը
ասաց թէ գիտէ, որ շուկայում մի ինչ որ խա-
նութ են ունեցել և թէ գնայ ու տեսնի, կա-
րելի է գտնի: Նա էլ գնաց, ճիշտ որ գտաւ
իրենց խանութը, ներս մտաւ, եղած չեղած այի-
նոյինը հաւաքեց, խանութը բաց արեց ու նստեց
առետուր անելու: Այդ ժամանակ բազարով անց-
նում էին թագաւորի ոստիկանները, որոնք դուրս
էին եկել իմանալու, թէ ով էր կպցրել թուղթը,
Նրանք մօտեցան զագճու խանութին ու հարցրին
թէ՝ այսպէս բան է պատահել, հօ խաբար չունի:
Տղան ծիծաղելով պատասխանեց.

Այդպէս դուք բան կիմանաք. հանեցէք ձեր շորերն ու զէնքերը զրէք իմ խանութս, աղքատի շորերը հագէք որ գտնէք, թէ չէ չէք գտնի:

Ոստիկանները հաւանեցին այդ խորհուրդը, պատառտած շորեր հագան, իրենց շորերը տուին նրան ու գնացին վիճակն ու: Երեք օր ման եկան, բայց բան չը գտան և դարձան եկան տղի մօտ, բայց տղան չը կար. դէս ընկան, դէն ընկան, բայց նրան չը գտան և ամօթով պալատը գնացին: Թագաւորն իմանալով այս՝ շատ բարկացաւ, բայց ինչ կարող էր անել: Մէկէլ օրը օյին բազ տղան գիշերով էլի գնաց, թուղթ կպցրեց, որի վրայ այսպէս էր գրուած. «զագճի եմ, զագճի, տեսակ-տեսակ օյին գիտեմ, պստիկը սա է, մեծը յետոյ կը տեմնէք. ոստիկաններին քեաչայ հագցնողն ես եմ. դուք զազը ճնճուկի տեղ էք առնում համ»: Այս որ իմացաւ թագաւորը՝ շատ նեղացաւ և չը գիտէր թէ ինչ անէր:

Այդ ժամանակ թագաւորի նազիրներից մէկը մի ուղտ բերեց, լաւ զարդարեցին, մէջըին մի բեռ արծաթ բարձեցին և քաղաքի մէջ էլ լուր տարածեցին թէ ուր է գնում, ետեից էլ մարդիկ նշանակեցին, որ հեռուից աչք պահեն թէ ուր կը գնայ: Զարդարուն ուղտը գնաց տղայի տան առաջով անցնելու. տղան տեսնելով առջեր կտրեց, ուղտը չոքեց, այն ժամանակ տղան բեռը վերցրեց ներս քաշեց, իսկ ուղտին էլ շաապով ներս տարաւ ձգեց մառանը: Աչք բռնող մարդիկը

ուղտին աչքից կորցրին և չը տեսան թէ ով բըռա նեց ուղտին. այս կողմն ընկան, այն կողմն ընկան, բայց գտնել չը կարողացան: Գիշերով տղան նորից բայց գտնել զրով կարողացան: Գիշերով տղան նորից բայց գտնել չը կարողացան: Գիշերով տղան նորից բայց գտնել չը կարողացան: Գիշերով տղան նորից բայց գտնել չը կարողացան:

Թագաւորը շատ նեղացաւ, կանչեց վեզիրին ու հրամայեց, որ անպատճառ ուղտին գտնեն ու բերեն: Նազիրը լսելով այս հրամանը, մի ջագուրազ-կախարդ պառաւ կնիկ գտաւ բերեց, լաւ շորեր հագցրեց ու հրամայեց, որ գնայ տնէ տուն ուղտի միս ուղի, գտնի ու բերի: Կախարդ կինը լալով ու ողբով տներն ընկաւ, ամեն տեղ մտաւ գուրս եկաւ ասելով թէ մի տղայ ունի, որ ծանր հիւանդ է, բժիշկներն ասել են, որ եթէ ուղտի միսն ուղտի կը լաւանայ: Այս կախարդը տնէ տուն մանզալով գնաց ու մի պառաւի տուն մտաւ ու ասաց թէ աման նանի, տղաս ծանր հիւանդ է ու քիչ ուղտի միս գտիր, որ ուտացնեմ լաւանայ: Էս անաքանդ կնիկը չը հասկանալով կախարդի սատանութիւնը, գնաց ուղտի սրունքից մի քիչ կտրեց, բերեց ու տուեց նրան:

— Ապրիս ու ուրախանաս, ծլիս ու ծաղկիս, ասաց կախարդը և ուրախացած գուրս պրծաւ տնից, որպէս զի գնայ ու յայտնէ թագաւորին:

Հէնց որ տնից գուրս եկաւ, մի տղայ ուստ

եկաւ կախարդին ու նկատելով որ փէշի տակ
ինչ որ բան է տանում, հարցը եց.

—Նանի, փէշիդ տակ ի՞նչ կայ:

—Ուղարի միս է որդի, տղէս հիւանդ է,
տանում եմ ուտացնեմ որ լաւանայ:

—Հա, այդպէս բան կայ համ, արի գնանք
տուն, ես քեզ լաւ տեղից կտրեմ ու տամ: Կա-
խարդը հաւատալով նրան, գնաց: Հէնց որ տուն
մտան, տղան վերցրեց զագանակը ու մէկ որ
խփեց կախարդի զլիխին, նա վեր ընկաւ ու տեղն
ու տեղը մեռաւ: Նորից թուղթ գրեց ու գիշե-
րով պալատի պատին կպցրեց—«զագձի եմ, դագ-
ձի, տեսակ տեսակ օյին գիտեմ, պստիկը սա է,
միծը յետոյ կը տեսնէք. պառաւին կորցնողն էլ
ես եմ. դուք դազը ճնճղուկի տեղն էք առնում համ»:

Թագաւորին իմանալով այս, շուարուեց մնաց,
հերսից պատուում էր, բայց ի՞նչ կարող էր անել:

Թագաւորի աղջիկը նշանուած էր վեզիրի
որդու հետ և պսակի ժամանակը մօտեցաւ: Թա-
գաւորը ամեն կողմ իր հպատակներին յայտա-
րարեց, բայց աղջիկը կանգնեց ու հօրն ասաց
թէ ես ջնուդի որդուն չեմ առնի, զլուխս կըտ-
րիր ու նրան մի տալ: Ղաղճի տղան իմացաւ
այս և տուն գալով մօրից կնկայ խամ հալաւ խըն-
դիրեց. մայրը իր հարսանիքի շորերը պահած ունե-
նալով հանեց և տուեց որդուն: Որդին հագաւ,
զուգուեց-զարդարուեց և նայողը կը կարծէր թէ
կոկիկ աղջիկ է. տղան աւելի գեղեցիկ էր

երեսում, որովհետեւ դեռ տասնուվեց տարեկան
չը կար: Նա իր մօրը խրատեց, որ իր հետ պա-
լատը գնայ և դուրսը սպասէ, մինչև որ ինքը ներս
գնայ ու նորից դուրս գայ:

—Երբ դուրս գամ—, ասաց նա, —դու էլ յետ
մի նայի ու առջեցս գնա: Այսպէս գնացին պա-
լատ, զագձին ներս մտաւ ապարանքը և յայտնեց,
որ թագաւորի աղջկան բան ունի ասելու և իրեն
տանեն նրա մօտ, նրան իսկոյն տարան հարսնա-
ցուի մօտ և իրենք դուրս եկան մտածելով, որ
գուցէ հարսնացուն ականջ գնի նրսն և մի բան
դուրս գայ:

Կնկայ շոր հագած զագձի տղան տեսնելով
որ մենակ մնացին, հարցը եց հարսնացուին.

—Ինչու վեզիրի որդուն մարդու չես գնում,
նա շատ լաւ երիտասարդ է:

—Զէ, չէ քուրիկ, Աստուած չանէ, որ ես
ջնուդի որդուն առնեմ:

—Լաւ, որ այդպէս է, ինչոր ես ասեմ ա-
կանջ կանեմ:

—Կ'անեմ:

—Համա տես որ ոչորի չասես ու գաղտնի
պահես. ես քեզ այստեղից կազատեմ, Ահա այս
իմ շորերը հագիր, քու շորերն էլ ես կը հագնեմ
ու դու դուրս գնայ, այնտեղ մայրս սպասում է,
կը կարծէ թէ ես եմ. ես նրան ասել եմ արդէն
և նա առջեկդ կը գնայ, իսկ դու նրա ետերից գնա:

—Շատ լաւ. կը լինի, քուրիկ—, ասաց թա-

գաւորի աղջիկը, հագաւ նըա շորերը և դուրս
եկաւ ապարանքից ու գնաց:

Քիչ ժամանակից յետոյ թագաւորը նորից իր
աղջկայ սենեակը մտաւ, որ համոզէ.

— Հիմի ի՞նչ ես մտածում, աղջիկս, ի՞նչ
խելքի վրայ ես. իմ կամքն այն է, որ դու համա-
ձայնուես:

— Իմ կամքս կամք է—, պատասխանեց աղ-
ջկայ շորեր հագած զազճին, բայց որովհետև դու
այդպէս ես կամենում, ես էլ մի խնդիրք ունեմ,
թէ որ կը համաձայնուես, ես էլ խօսք կը տամ:

— Ասա, աղջիկս ի՞նչ կայ, ես համաձայն եմ:
— Ես կ'ուզեմ, որ երբ հարսանիքը պրծնի,
վերջին օրը՝ գիշերով քաղաքի մէջ մարդ չը ման
դայ, ոչ ոստիկան լինի, ոչ էլ ճրագ վառուի, որ
մենք ազատ ման գալ կարողանանք:

Հայրը շատ ուրախացաւ, համաձայնուեց և
հրամայեց որ եօթն օր ու եօթը գիշեր հարսա-
նիք անեն:

Երկրորդ օրը սկսուեց հարսանիքը. Ժողո-
վուրդը մեծ ուրախութիւն ու քէֆ էր քաշում,
ամբողջ քաղաքը քէֆի մէջ էր լողում եօթն օր
շարունակ. հարսանիքը շատ ճոխ էր՝ գինին ու
ուտելիքը բոլ և ամեն տեղ քեամանչայ, դաւուլ-
զուննա էին ածում: Վերջին գիշերը վրայ հա-
սաւ. քաղաքը կարծես թէ մեռաւ, ոչոք փողոց
դուրս չեկաւ, տերեն անզամ տեղիցը չէր շար-
ժում: Նորապսակները միայնակ ֆայտօնը նըս-

տեցին ու դուրս եկան քաղաքում զբօսնելու:
Շուտով մի փողոց մտան և փեսան ցոյց տալով
մօտ եղած շինութիւնը, ասաց որ դա թագա-
ւորի բարութիւնան է (վասովի պահեստ), մի
ուրիշ տեղ թէ սիլահ խանան է (զինանոց), մի
ուրիշ տեղ թէ թօփիւնան է (թնդանօթարան) և
այդպէս նորահարսին մէկ-մէկ ցոյց տուեց բոլոր
նշանաւոր տեղերը և վերջը ցոյց տուեց կախա-
ղանը. նորահարսը սատանութեամբ ասաց.

— Ո՞հ, այս գիշեր այսպիսի վատ տեղ գալ
չարժէր. դու որ թագաւոր կը դառնաս, չը լինի
թէ իմանամ, որ առանց արդար գատաստան կըտ-
րելու մարդ կախես: Այս չուանը մի վիզս անց-
նեմ, տեսնեմ ոնց է—, ասաց ու դիմամբ չու-
անը իր վիզը ցցեց և կանչեց,— ույ, ույ, ի՞նչ
վատ ցաւեց: Հապա տեսնեմ դու անցկացրու:

Փեսան ոչինչ չը կասկածելով վիզը անցրեց
չուանի միջով, իսկ ծպտուած հարսը առանց
յապաղելու աթոռը ուսների տակից դուրս բաշեց
և փեսան կախուեց. այլիս ազատուելու ճար չը
կար ու խեղճ փեսան խեղտուեց: Հարսը իսկոյն
շորերը փոխեց ու մի թուղթ գրեց՝ «զազճի եմ,
զազճի, տեսակ-տեսակ օյին գիտեմ, պստիկը սա
է, մեծը յետոյ կը տեսնէք. թագաւորի փեսին
ես կախեցի, աղջիկն էլ մօտս է. դուք իմ զազը
ճնճղուկի տեղ էք առնում հա» , այս թուղթը
կպցրեց ֆայտօնի վրայ ու իր տունը գնաց:

Առաւօտեան թագաւորը իմացաւ բոլորը՝ որ

Փեսին կախել են, իսկ աղջիկն էլ կորել է, շուա-
քեց մնաց թէ ինչ անի: Վերջը այսպիսի հրաման
հանեց թէ՝ ով որ այդ բաները արել է և գայ
մօտս, իրեն չեմ դիպչիլ և ինչ մուրազ որ ուզէ,
կը կատարեմ: Դազին իմանալով այս, գնաց
թագաւորի առաջ կանգնեց.

— Թագաւորն ապրած կենայ—, ասաց նա, —
այդ բոլոր օյխններ սարքողը ես եմ, քո աղջիկն էլ
մօտս է ու խնդրում եմ ականջ դնել ինչ որ կա-
սեմ. ես մի աղքատ որբ աղայ էի, մայրս ինձ մի
դադ տուեց թէ տա՛ր ծախիր. եկայ բազարը, վե-
զիրը ռաստ եկաւ ու ասաց թէ էղ ճնճղուկը տուր
ինձ առնեմ, ասացի թէ սա ճնճղուկ չէ, իսկ նա
ճուաց թէ ճնճղուկ է, ես էլ վախեցայ ու տասը
փարայով ծախեցի. ահա բանն այսպէս էր, հիմա
դու ինձ ինչ կուզես արա:

Հենց որ թագաւորը լսեց այս բոլորը, ար-
մացաւ-զարմացաւ ու հրամայեց, որ վեզիրին իր
մօտ կանչեն: Վեզիրն եկաւ ու դողդողալով թա-
գաւորի առջեր կանգնեց. Թագաւորը հրամայեց,
որ վեզիրին տանեն, ձիու պոչից կապեն: Զին
փողոցից փողոց վազելով կտոր կտոր արեց նրա
մարմինը: Տղային էլ պսակեցին թագաւորի աղ-
ջկայ հետ, որ իրենց մուրազին հասնեն:

Երկնքից երեք խնձոր ընկաւ, մէկն այս
հէքեաթ ասողին, մէկը զրողին ու մէկն էլ
կարգացողին:

ԳՈՐԾ-ԱՂՋԻԿ

Մի թագաւոր երեք մանչ զաւակ ունէր և
նրանց նշնելու ժամանակն եկաւ: Գեղի աղաթն-
էն էր, որ մանչերը երթային ժողովրդի մէջ խըն-
ձոր նետէին և որի խնձորը աղջկան դիպչէր,
նրան պիտի առնէր: Նրանք հերթով նետեցին.
մեծ տղայի խնձորը դիպաւ մի աղջկան ու նա-
նրան ու զեց, միջնեկին էլ դիպաւ մի ուրիշն,
նա էլ նրան ուզեց, իսկ պսափկի խնձորը ոչոքի
չը դիպաւ և մի աղբիւրի մէջ ընկաւ: Փոքր որ-
դին արտմեց ու մտածեց «երեկի իմ բաղդն աղ-
բիւրի մէջ է» ու նստեց աղբիւրի մօտ ու ըս-
կսեց անդազրում լալ: Յանկարծ աղբիւրից մի
գորտ գուրս եկաւ. տղան բռնեց աարաւ տուն,
դոլապում զրեց ու ինքը գուրս գնաց:

Քիչ յետոյ վերագարձաւ տուն և տեսաւ,
որ ճաշը պատրաստ է, կերաւ, խմեց ու զարմա-
նալով նորից զուրս գնաց: Իրիկոն տուն գալով
տեսաւ, որ ընթրիքը պատրաստ զրուած է թոն-
րի վրայ. կերաւ խմեց ու ինքն իրեն ասաց «մէկ
թագնուիմ, տեսնեմ ով է այդ անում» ու խսի-
րի մէջ փաթթուելով մի պուճախում ցից կանգ-
նեց: Շատ չանցած ինչ տեսնի. զոլապից մի
զեղեցիկ աղջիկ գուրս եկաւ, զորտի հաղուստը
վայր զրեց, աւլեց, սեղան պատրաստեց և հէնց
որ ուզում էր նորից զորտի հալաւը հագնի, աը-
ղան խսիրից դուրս պըծաւ բռնեց ու չը թողեց
որ զորտի հալաւը հագնի: Աղջիկը շատ խնդրեց

որ թողնի, թէ չէ վերջը կը կսկծայ, բայց տղան
ականջ չարաւ, հագուստը պատռեց, որ նորից
գորտ չը դառնայ, այլ իրեն կին դառնայ:

Մի օր թագաւորը իր որդոց տեսութեան
ժնաց, մտաւ մեծի, միջնեկի մօտ և յետոյ եկաւ
փոքրի մօտ որ տեսնի թէ նրա խնձորն ինչ
բաղդ է ունեցել: Եկաւ տեսաւ որ նրա հարսն էլ
գեղեցիկ է՝ սիրահարուեց ու ոխ պահեց որ մի
կերպ կնկան ետ խլէ: Գնաց տուն ու զաւազնե-
րով իր մօտ կանչեց փոքր որդուն. որդին եկաւ,
թագաւորն ասաց.

—Կուզեմ որ հէնց հիմի մի այնպիսի խալի-
չայ բերես, որ բոլոր ասկեարս վրէն նստի ու
էլի աւելանայ: Որդին տիսուր տուն եկաւ ու պատ-
մեց իր կնոջը թագաւորի ասածները:

—Հախն է, քեզ չասի որ հալաւս չը պատ-
ռես կը կսկծաս. ոչի՞նչ, մի՛ նեղանալ, գնա՛ ինձ
բոնած աղբիւրը և վայր ճուա՛ թէ ձեր աղջիկն
ասում է, թէ հօրս ամենափոքր խալիչէն դրկեցէք:

Նա գնաց աղբիւրի մօտ և խալիչէն դուրս
տուին: Վերցրեց խալիչէն, տարաւ թագաւորին.
ամբողջ ասկեարը նստեց վրէն և դեռ աւելացաւ,
իսկ ինքը տուն վերադարձաւ:

Թագաւորը դարձեալ մարդ դրկեց որդուն
կանչելու: Երբ նա եկաւ, թագաւորն ասաց.

—Գնա՛ այնպիսի մի կաթսայում վլաւ եփիր,
որ բոլոր ասկեարն ուտի և դեռ աւելանայ:

Որդին սիրտը կոտրած եկաւ տուն ու պատ-

մեց իր կնոջը, իսկ կինը նորից կրկնեց՝

—Դեռ դա քիչ է, աչքդ թող դուրս գայ.
գնա՛ աղբիւրի մէջ կանչիր, թէ ձեր աղջիկը խըն-
դրում է որ իր հօր ամենափոքր կաթսան դրկէք:

Նա գնաց, կաթսան տուին, եկաւ, վլաւ
եփեց, բոլոր ասկեարը կշտացաւ ու գեռ աւելացաւ:

Հազիւ մի օ՛ էր անցել և թագաւորը էլի կան-
չեց որդուն ու հրամայեց այնպիսի մի ճութ խա-
ղող բերել, որ բոլոր ասկեարը ուտի ու գեռ աւե-
լանայ. տղան եկաւ կնոջը պատմեց, իսկ կինը
նորից բարկացաւ.

—Քեզ այդպէս է հարկաւոր, քեզ չասի՞ որ
հալաւս չը պատռես. գնա աղբիւրը, կանչիր որ մի
ճութ խաղող ան քեզ: Խաղողը տուն բերեց և
հէնց որ կնոջը մօտեցաւ ճթից մի պտուկ ընկաւ.
շտապով վերցրեց պտուկը և ուզում էր կպցնել.
կինին ասաց.

—Այդ էլ դու կեր.


—Այս մի հատիկը իմ փորս չի կշտացնիլ,
բնչպէս պէտք է այս ճութը ամբողջ ասկեարը
կշտացաւ: և գնա աւելացաւ:

—Գնա՛, հերիք է—, պատասխանեց կինը:
Խաղողը տարաւ և իրաւ որ ամբողջ ասկեարը
կշտացաւ: և գնա աւելացաւ:

Հետեւեալ օրը թագաւորը նորից կանչեց և
այս անգամ հրամայեց այնպիսի մի մարդ բերել,
որ ինքը մի թիզ լինի, իսկ միրուքը երկու թիզ:
կինը նորից բարկացաւ ու աղբիւրը դրկեց: Ճիշտ
որ աղբիւրից մի թզուկ տուին և նա եկաւ թա-
գաւորի մօտ: Թագաւորը թախտի վրայ նստած
սպասում էր ու գօրքն էլ շըջապատել էր նրան: Թագաւորը
տեսնելով թզուկին, վախեցաւ և զար-

մացաւ, որ իր որդին ամեն ինչ կատարեց։ Թը զուկին թագաւորի առաջ վայր դրին և նա սկսեց պարել. քիչ խաղալուց յետոյ նա մօտեցաւ թագաւորին մի չափալախ տուեց ասելով «զու չէ՞ր, որ որդուդ ասիր թէ մի խալիչա բեր, որ ամբողջ ասկեարդ նոտի ու դեռ աւելանայ, հապա դա լինելու բան էր, բայց Աստուծով կատարուեց», ասաց ու շարունակեց խաղալ։ Փոքը ինչ յետոյ նորից մօտեցաւ թագաւորին մի հետ զարկեց դընչին ասելով. «զու չէ՞ր, որ որդուցդ այնպիսի կաթսայ պահանջեցիր, որի մէջ եփած փլաւով ամբողջ ասկեարդ կշտանայ և դեռ աւելանայ. դա լինելու բա՞ն էր» ասաց, նորից զարկեց և շարունակեց խաղալ։ Շատ չանցած թագաւորին մի սիլլա տուեց ասելով «զու չէ՞ր, որ որդուցդ այնպիսի մի ճութ խաղող պահանջեցիր, որով ամբողջ ասկեարդ կշտանար և դեռ էլի մնար, դա կատարուելու բա՞ն էր»։ Էլի խաղաց թզուկը և մօտենալով թագաւորին մի լաւ զարկեց ասելով «զու չէ՞ր, որ որդուդ ասիր, թէ այնպիսի մի մարդ բեր, որ ինքը մի թիզ լինի, իսկ միրուքը երկու թիզ. դա լինելու բա՞ն էր. բայց եպաւ, Աստուծով էր և պիտի լինէր»։ Այս որ ասաց թզուկը, մի անգամ էլ զարկեց և այնքան ուժգին, որ թագաւորի զուխը տեղից պոկուեց ու մի կողմ ընկաւ և նա տեղն ու տեղը հոգին փչեց։

Սրանից յետոյ թզուկն իր տեղը վերադարձաւ, իսկ թագաւորան ու արքան իինը հանգստացան ու խաղաց ապրեցին միջնէ իրենց մահը։



ՀՀ Ազգային գրադարան



NL0399402

8404

Г 2-41122

1030 66 86061.

ՀԱՅ ԶԻՆՈՒԹՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1	Այբբենարան	և	Ընթերցարան	գ.	10	կ.
№ 2	Երգարան (85 երգ)	• • • •	գ.	20	կ.	
№ 3	Շամիրամի ուլունքը	• • • •	գ.	5	կ.	
№ 4	Երկու հերիտթ	• • • • •	գ.	5	կ.	

Սոյն գրքեր ստանալ ցանկացողները պետք է զիմեն՝
հրատարակչին

Кievъ, Тарасовская ул № 12, Свято. Хорену
Миацаканици

Կամ

Թիֆլիս, Զարարիա Գրիգորիանցի գրավաճառանոցը
Գումարով գնողներին 20% զեղչ.